գիտաւորութիւն Դատաւորին էր իրաւախոհ առնել զերկուս ազգս, և նովաւ կատարել զհրաման Արքային։ Գնացին և Հայք առ Նուրի Էֆէնտի, առ Դատաւորն եւ առ Քաղաքապետն եւ յորդորէին զնոսա սկիզբն առնել գործոյն։ Դատաւորն միայն բանիւ յուսադրէր զՀայս, ամենայն ինչ կատարի ասելով՝ այլ սիրտ նորա էր ընդ Ցունաց։ Եւ զկնի աւուրց ինչ կոչեաց առ ինքն զգլխաւորս Հայոց և Ցունաց ('ի 6 Նոյեմբերի), ուր եղեն բազմադիմի բանք 'ի վերայ խնդրոյն։ Հայք յեցեալ էին 'ի բառն բաժանորդ, Ցոյնք անհնարին վարկանէին զայն, եւ ասա ասեն չունիմք դիր 'ի Կոստանդինուպօլսոյ, և թէ՝ բաժանորդք եմք վանաց Ս. Յակոբայ. և թէ չիք յատուկ հրովարտակ 'ի Դրանէ վասն այսր, եւ թէ՝ Դենպետն չէ ձեռընհաս այսպիսի գործոց, և այլ սոցին նման ծանր բանք՝ կամելով երկեղուկս առնել զՀայս և զԴատաւորն։ Թէպէտ եւ Հայք ետուն նոցա զարժանաւոր պատասխանիս, այլ Դատաւորն յորդորէր զնոսա միաբանիլ սիրով ըստ օրինի քրիստոնէից եւ հնազանդիլ Թագաւորին. զի հաւատով քրիստոնեայք և հպատակ Արքային էք ասէ՝ միաբանեցէք սիրով. մինդ 'ի ձէնջ տացէ փոքր ինչ եւ միւսդ այնու չատասցի, և այլ բանք. իբրեւ չերեւեցաւ նշոյլ ինչ հաճութեան յերկուց կողմանց, ասէ՝ ես գոլով այլազգի՝ յորդորեմ զքրիստոնեայսդ միաբանիլ եւ բառնալ զխռովութիւնն 'ի միջոյ, եւ չվատնել ընդունայն զինչս ձեր, ապա թէ ոչ, առաւել կամիմք զխռովութիւնն ձեր. զի չահ բազում է մեզ անտի, որովհետեւ ոչ կամիք լսել բանից իմոց, քաւեալ եմ ես։ Իսկ Նուրի և Զուխատարն 'ի հեռուստ դիտէին, թէ զինչ կամի առնել Դատաւորն. թուի թէ վերստին հարկ լինի մեզ գրել 'ի Դուռն և ըստասել պատասխանւոյ։ Եւ գնացեալ Զուխատարին ասէ՝ ցնա՝ ընդէ՞ր երկարես և ոչ սկիզբն առնես գործոյն. զի առաքիչքն իմ սպասեն պատասխանւոյ և սուրհանդակքն ասա են։ Եւ նա ասէ կամիմ հաճութեամբ երկուց ազգաց վճարել զգործն, զի մի վերստին ճանձրացուսցեն զԱրքայ և զպարագայս նորին. և նա յառաջ եբեր զբան հրովարտակին և զդատն երկուց ազգաց. եւ զիա՞րդ հաճութիւն որոնես ասա, և թէ՝ չէ գրեալ վերստին դատել և հաճու-